դաս 32. մրգի մզվածքներ, ոչ ալկոհոլային. գարեջուր. կոճապղպեղի գարեջուր. ածիկի գարեջուր. գարեջրի քաղցու. ոչ ալկոհոլային մրգային ըմպելիքներ. կաթնաշիճուկային հիմքով ըմպելիքներ. բաղադրություններ ոչ ալկոհոլային ըմպելիքներ պատրաստելու համար. ոչ ալկոհոլային բնահյութեր ըմպելիքներ պատրաստելու համար. մրգահյութեր. օշարակներ ըմպելիքների համար. ջրեր (ըմպելիքներ). բաղադրություններ գազավորված ջուր արտադրելու համար. լիթիումաջուր. հանքային ջրեր (ըմպելիքներ). զելտերյան ջուր. սեղանի ջրեր. քաղցուներ. լիմոնադներ. գայլուկի մզվածքներ գարեջուր պատրաստելու համար. բանջարեղենի հյութեր (ըմպելիք). օշարակներ լիմոնադների համար. ածիկի քաղցու. խաղողի չխմորված քաղցու. օրշադ. սոդայաջուր. շարբաթ (ըմպելիք). տոմատի հյութ (ըմպելիք). ոչ ալկոհոլային ըմպելիքներ. հաբեր գազավորված ըմպելիքներ պատրաստելու համար. փոշիներ գազավորված ըմպելիքներ պատրաստելու համար. գազավորված ջուր. սարսապարիլ (ոչ ալկոհոլային ըմպելիք). ոչ ալկոհոլային ապերիտիֆներ. ոչ ալկոհոլային կոկտեյլներ. ոչ ալկոհոլային մրգային նեկտարներ. իզոտոնիկ ըմպելիքներ. ոչ ալկոհոլային խնձորի հյութ. կվաս. ոչ ալկոհոլային ըմպելիքներ մեղրի հիմքով. սմուզիներ (մրգերի կամ բանջարեղենների խառնուրդների հիմքով ըմպելիքներ). հալվե վերայի հիմքով ոչ ալկոհոլային ըմպելիքներ. գարեջրի հիմքով կոկտեյլներ. սոյայի հիմքով ըմպելիքներ, բացի կաթի փոխարինիչներից. պրոտեինով հարստացված սպորտային ըմպելիքներ. բրնձի հիմքով ըմպելիքներ, բացի կաթի փոխարինիչներից. սուրճի համով ոչ ալկոհոլային ըմպելիքներ. թեյի համով ոչ ալկոհոլային

ըմպելիքներ. ոչ ալկոհոլային զովացուցիչ ըմպելիքներ. գարու գինի (գարեջուր). էներգետիկ ըմպելիքներ. չրերից պատրաստված ոչ ալկոհոլային ըմպելիքներ. շենդի. օսլայի հիմքով չոր խառնուրդներ ըմպելիքներ պատրաստելու համար. գարեջրի հիմքով ոչ ալկոհոլային կոկտեյլներ. ոչ ալկոհոլային գարեջուր. փոշիներ ոչ ալկոհոլային զովացուցիչ ըմպելիքներ պատրաստելու համար. սառեցված գայլուկ գարեջուր պատրաստելու համար. գայլուկի հատիկներ գարեջուր պատրաստելու համար.

դաս 33. անանուխի թրմօղի. մրգի մզվածքներ, ալկոհոլային. դառը թրմօղիներ. անիսի լիկյոր. անիսի օղի. ապերիտիֆներ. արակ. թորած խմիչքներ. սիդրեր. կոկտեյլներ. կյուրասո. դիժեստիվներ (լիկյորներ և սպիրտային խմիչքներ). գինիներ. ջին. լիկյորներ. մեղրային խմիչք (մեղրագինի). բալի օղի. սպիրտային խմիչքներ. բրենդի. գինի խաղողի չեչից. տանձօղի. սակե. վիսկի. ալկոհոլային բնահյութեր (էսենցիաներ). սպիրտային լուծամզուքներ. ալկոհոլային խմիչքներ, բացի գարեջրից. մրգեր պարունակող ալկոհոլային խմիչքներ. բրնձի սպիրտ. ռոմ. օղի. խառնակազմ ալկոհոլային ըմպելիքներ, բացի գարեջրի հիմքով խմիչքներից. շաքարեղեգի հիմքով ալկոհոլային խմիչքներ. հացահատիկի հիմքով թորած ալկոհոլային խմիչքներ. գինու հիմքով խմիչքներ. սոջու. մակկոլի.

դաս 34. լուցկիներ. սիգարների և սիգարետների համար մուշտուկների սաթե ծայրապանակներ. ծխախոտ. ծխախոտի քսակներ. սիգարետների ծայրապանակներ. ֆիլտրեր սիգարետների համար. վառիչներ ծխողների համար. գազի բալոններ վառիչների համար. ծխամորճեր. ծխախոտաթղթերի գրքույկներ. կլանող թուղթ ծխամորճերի համար. ծամելու ծխախոտ. սիգարներ. սիգարակտրիչ մեքենաներ. արկղեր սիգարների համար. արկղեր սիգարետների, ծխագլանակների համար. մուշտուկներ սիգարների համար. ծխախոտի փոխարինիչներ պարունակող սիգարետներ, ոչ բուժական նպատակների համար. սիգարետներ, ծխագլանակներ. գրպանի հարմարանքներ սիգարետները, ծխախոտերը փաթաթելու համար. մուշտուկներ սիգարետների համար. սիգարետի մուշտուկների ծայրապանակներ. ծխախոտաթուղթ. սիգարիլներ. ծխամորճերը մաքրելու հարմարանքներ. կայծքարեր. ծխելու խոտաբույսեր. դրոցներ ծխամորճերի համար. լուցկիների բռնիչներ. անոթներ ծխախոտի համար. քթախոտ. ծխախոտատուփեր. լուցկու տուփեր. մոխրամաններ ծխողների համար. թքամաններ ծխախոտի համար. խոնավարարներով տուփեր սիգարների համար. էլեկտրոնային սիգարետներ. հեղուկ լուծույթներ էլեկտրոնային սիգարետների համար. ծխողների համար բերանի ցողացիրներ. ծխախոտի բուրավետարարներ, բացի եթերային յուղերից. էլեկտրոնային սիգարետների բուրավետարարներ, բացի եթերային յուղերից. սիգարետների վառիչների համար հարմարեցված պատրույգներ. նարգիլեներ.

դաս 35. օգնություն գործարարության կառավարման հարցերում. տվյալներ գործարարական գործառնությունների մասին. հայտարարությունների փակցնում. ներմուծման-արտահանման գործակալությունների ծառայություններ. առևտրային տեղեկատվության գործակալությունների ծառայություններ. ինքնարժեքի վերլուծություն. գովազդային նյութերի տարածում. լուսապատճենահանման ծառայություններ. աշխատանքի վարձելու գործակալությունների ծառայություններ. գրասենյակային սարքերի և ապարատների վարձույթ. հաշվապահական գրքերի վարում. հաշվետվությունների կազմում հաշիվների վերաբերյալ. առևտրային աուդիտ. խորհրդատվություն գործարարության կազմակերպման և կառավարման հարցերով. խորհրդատվություն աշխատակիցների անձնակազմը կառավարելու հարցերով. խորհրդատվություն գործարարության կառավարման հարցերով. մեքենագրման ծառայություններ. ապրանքների ցուցադրում. գովազդային նյութերի առաքում ուղիղ փոստով. օգնություն առևտրային կամ արդյունաբերական ձեռնարկությունների կառավարման հարցերում. գովազդային նյութերի նորացում. նմուշների տարածում. գործարարության արդյունավետության փորձագիտական ծառայություններ. աճուրդների անցկացում. շուկայի ուսումնասիրություն. առևտրային գործունեության գնահատում. հետազոտություններ գործարարության ասպարեզում. գովազդային նյութերի վարձույթ. խորհրդատվություն գործարարության կազմակերպման հարցերով.

գովազդային տեքստերի հրատարակում. գովազդ. ռադիոգովազդ. կոնյունկտուրային (իրավիճակի, իրադրության) հետազոտություններ. ծառայություններ հասարակական հարաբերությունների բնագավառում. սղագրական ծառայություններ. հեռուստագովազդ. հաղորդագրությունների գրառում (գրասենյակային աշխատանքներ). ցուցափեղկերի ձևավորում. գովազդային գործակալությունների ծառայություններ. գործարարության կառավարման խորհրդատվական ծառայություններ. մանեկենների ծառայություններ ապրանքները գովազդելու կամ խրախուսելու համար. շուկայագիտական (մարքեթինգային) հետազոտություններ. տվյալների ավտոմատացված հիմնապաշարների վարում. մասնագիտական խորհրդատվություն գործարարության ասպարեզում. տնտեսական կանխատեսում. ցուցահանդեսների կազմակերպում առևտրային կամ գովազդային նպատակներով. գործնական տեղեկատվության տրամադրում. հասարակական կարծիքի հետազոտում. վճարման փաստաթղթերի նախապատրաստում. աշխատակիցների հաստիքների համալրում. ձեռնարկությունները տեղափոխելու հետ կապված վարչական ծառայություններ. տարածքների վարձակալում գովազդի տեղադրման համար. վաճառքի օժանդակություն երրորդ անձանց համար. քարտուղարական ծառայություններ. հարկային հայտարարագրերի կազմում. հեռախոսազանգերին պատասխանելու ծառայություններ բացակայող բաժանորդների համար. տեքստի մշակում. լրագրերի բաժանորդագրության կազմակերպում երրորդ անձանց համար. գովազդ փոստով. հյուրանոցային գործունեության կառավարում. ստեղծագործների և կատարողների գործերի կառավարում. տեղեկատվության հավաքում տվյալների համակարգչային հիմնապաշարներում. տեղեկատվության կանոնակարգում տվյալների համակարգչային հիմնապաշարներում. առևտրական տոնավաճառների կազմակերպում. լուսապատճենահանող սարքավորման վարձույթ. ինտերակտիվ գովազդ համակարգչային ցանցում. մատակարարման ծառայություններ երրորդ անձանց համար (ապրանքների գնում և ձեռնարկատերերին ապրանքներով ապահովում). տեղեկատվության որոնում համակարգչային ֆայլերում երրորդ անձանց համար. գովազդային ժամանակի վարձույթ զանգվածային տեղեկատվության բոլոր միջոցներում. մամուլի տեսություն. առևտրի ավտոմատների վարձույթ. հոգեբանական տեստավորում աշխատողներ ընտրելիս. գների համեմատման ծառայություններ. մանրածախ վաճառքի նպատակով ապրանքների ցուցադրում բոլոր լրատվամիջոցներով. սպառողներին առևտրային տեղեկատվության և խորհուրդների տրամադրում ապրանքների և ծառայությունների ընտրության հարցում. հեռահաղորդակցական ծառայությունների բաժանորդագրում երրորդ անձանց համար. գնման պատվերների մշակման գործընթացների կառավարում. ապրանքների և ծառայությունների լիցենզիաների առևտրային (կոմերցիոն) կառավարում երրորդ անձանց համար. ենթակապալառուի ծառայություններ (առևտրային (կոմերցիոն) օգնություն). հաշիվների ապրանքագրերի տրամադրում. գովազդային տեքստերի գրում. վիճակագրական տվյալների հավաքում և տրամադրում. գովազդի մանրակերտում. երաշխավորների որոնում. նորաձևության ցուցադրության կազմակերպում գովազդային նպատակներով. գովազդային ֆիլմերի արտադրություն. մարզիկների գործունեության կառավարում. մարքեթինգ (շուկայավարում). հեռուստամարքեթինգի ծառայություններ. դեղագործական, անասնաբուժական և հիգիենիկ պատրաստուկների և բժշկական պարագաների մանրածախ առևտրի ծառայություններ. վաճառքի ցուցադրափեղկերի (ստենդների) վարձույթ. գործարար և առևտրային հարաբերությունների ոլորտներում տեղեկատվության տրամադրում. վաճառքի օժանդակման համար որոնման համակարգի օպտիմալացում. վեբ-կայքերի երթևեկի օպտիմալացում. գովազդային ծառայություններ «վճարել մեկ կտտոցով» (PPC). առևտրային միջնորդային ծառայություններ. արտահաստիքային աշխատողների գործունեության կառավարում. առևտրային գործարքների համաձայնեցում և կնքում երրորդ անձանց համար. տվյալների էլեկտրոնային հիմնապաշարներում տվյալների նորացում և պահում. շինարարական նախագծերի համար առևտրային (կոմերցիոն) նախագծերի կառավարում. գործարար տեղեկատվության տրամադրում վեբ-կայքերի միջոցով. ապրանքներ և ծառայու-

թյուններ գնողների և վաճառողների համար առցանց վաճառատեղի տրամադրում. գովազդային հասկացությունների մշակում. արտաքին վարչական կառավարում ընկերությունների համար. հարկային հայտարարագրեր ներկայացնելու ծառայություններ. ծախսերը փոխհատուցող ծրագրերի առևտրային (կոմերցիոն) կառավարում երրորդ անձանց համար. գովազդային վահանակների վարձույթ. կենսագրական տվյալների գրում այլ անձանց համար. առևտրային կամ գովազդային նպատակներով վեբ-կայքերի ցանկի տրամադրում. հաճախ ճանապարհորդողների ծրագրերի կառավարում. հանդիպումների պլանավորման ծառայություններ (գրասենյակային գործառույթներ). հանդիպումների մասին հիշեցնելու ծառայություններ (գրասենյակային գործառույթներ). սպառողների հավատարմության ծրագրերի կառավարում. գովազդային սցենարների տեքստերի կազմում. տվյալների և գրավոր հաղորդագրությունների գրանցում. գրանցամատյանների տեղեկատվության թարմացում և պահում. տեղեկատվական ցանկի կազմում առևտրային կամ գովազդային նպատակներով. առևտրամիջնորդական ծառայություններ պոտենցիալ մասնավոր ներդրողների և ֆինանսավորման կարիք ունեցող ձեռնարկատերերի ընտրության հարցում. հեռուստախանութների ծրագրերի արտադրություն. հասարակության հետ հաղորդակցման ռազմավարության վերաբերյալ խորհրդատվություն. խորհրդատվություն գովազդային հաղորդակցության ռազմավարության վերաբերյալ. գործարար պայմանագրերի համաձայնեցում երրորդ անձանց համար. սպորտային միջոցառումների հովանավորմամբ ապրանքների և ծառայությունների խթանում. մրցակցային հետախուզական ծառայություններ. շուկայի հետախուզական ծառայություններ. ֆինանսական աուդիտ. թվային երաժշտության ներբեռնման համար մանրածախ վաճառքի առցանց ծառայություններ. ինչյունային ֆայլերի ներբեռնման համար մանրածախ վաճառքի առցանց ծառայություններ. նախապես գրառված երաժշտության և ֆիլմերի ներբեռնման համար մանրածախ վաճառքի առցանց ծառայություններ. դեղագործական, անասնաբուժական և հիգիենիկ պատրաստուկների և բժշկական պարագաների մեծածախ առևտրի ծառայություններ. նվերների ցանկի գրանցման ծառայություններ. թիրախային մարքեթինգ (շուկայավարում). գործարարության ժամանակավոր կառավարում. արտաքին գովազդ. արվեստի պատկերասրահների կողմից տրամադրվող արվեստի գործերի մանրածախ առևտրի ծառայություններ. վարչական օժանդակություն մրցույթի հայտերի վերաբերյալ. մարքեթինգ (շուկայավարում) ծրագրային ապահովման հրապարակման շրջանակներում. լրատվամիջոցների հետ կապերի ծառայություններ. կորպորատիվ հաղորդակցության ծառայություններ. գրասենյակային սարքավորումների վարձույթ համատեղ աշխատանքային պայմաններում. առևտրային լոբբիստական ծառայություններ. օգտագործողների կարծիքների տրամադրում առևտրային կամ գովազդային նպատակներով. օգտագործողների վարկանիշների տրամադրում առևտրային կամ գովազդային նպատակներով. հեռախոսային կոմուտատորի ծառայություններ. հացամթերքին վերաբերող մանրածախ առևտրի ծառայություններ. սպառողի պրոֆիլավորում առևտրային կամ մարքեթինգային նպատակներով. վարչական ծառայություններ բժշկական ուղղորդման համար. գործարար խորհրդատվական ծառայություններ թվային փոխակերպման համար. առևտրամիջնորդական ծառայություններ հաճախորդների հետ աշխատելու համար տարբեր մասնագետների ընտրության հարցում. այցելուների ընդունելության ծառայություններ (գրասենյակային գործառույթներ). բիզնեսի եկամտաբերության ուսումնասիրությունների պատրաստում. հեռախոսային տեղեկատուի տեղեկատվության տրամադրում. էլեկտրոնային վճարների գանձման ծառայությունների բաժանորդագրությունների կազմակերպում երրորդ անձանց համար. առևտրային միջոցառումների կազմակերպում և անցկացում. տվյալների մշակման ծառայություններ (գրասենյակային գործառույթներ). դրամարկղային մեքենաների վարձույթ. առաջատար սերնդի ծառայություններ. բժշկական գրառումների և ֆայլերի համակարգչային կառավարում. առցանց պատվիրման ծառայություններ ռեստորաններից սննդի դուրս հանման և առաքման ոլորտում. երրորդ անձանց համար ապրանքային նշան ստեղծելու գովազդային

ծառայություններ. արտադրանքի խթանում ազդեցություն ունեցող անձանց միջոցով. ազդեցիկ շուկայավարում. հաճախորդների որոնում երրորդ անձանց համար. մարքեթինգային (շուկայագիտական) հասկացությունների մշակում.

դաս 36. ապահովագրություն դժբախտ պատահարներից. տարաժամկետ մարման վարկեր. ապահովագրության վիճակագիրների ծառայություններ. անշարժ գույքի վարձույթ. միջնորդային գործունեություն. վարկային գործակալությունների ծառայություններ. անշարժ գույքի գործակալությունների ծառայություններ. միջնորդություն անշարժ գույքի հետ կապված գործառնություններում. պարտքերի բռնագանձման գործակալությունների ծառայություններ. ապահովագրման միջնորդություն. մաքսային միջնորդների (բրոքերների) ֆինանսական ծառայություններ. ապահովագրություն. բանկային ծառայություններ. անշարժ գույքի գնահատում. բարեգործական միջոցների հավաքագրում. փոխադարձ հիմնադրամների հիմնադրում. կապիտալ ներդրումներ. երաշխավորություն. դրամի փոխանակում. ճամփորդական վճարագրերի թողարկում. ֆինանսական հաշվանցում (քլիրինգ). պահպանում անկիզելի պահարաններում. դրամահավաքների կազմակերպում. փոխառությունների տրամադրում (ֆինանսավորում). հարկային փորձաքննություն. ֆինանսական գնահատումներ (ապահովագրություն, բանկային գործառնություններ, անշարժ գույք). ֆակտորինգ. խնամակալական ծառայություններ. ֆինանսավորում. ֆինանսական կառավարում. փոխատվության տրամադրում գրավի դիմաց. անշարժ գույքի կառավարում. բնակելի ֆոնդի կառավարում. ապահովագրություն հրդեհից. բնակարանների վարձույթ. ֆերմաների և գյուղատնտեսական ձեռնարկությունների վարձույթ. առողջության ապահովագրություն. ապահովագրություն դժբախտ պատահարներից ծովում. հիփոթեքային վարկեր. խնայբանկերի ծառայություններ. ֆինանսական վարձակալություն. բորսայական միջնորդություն. կյանքի ապահովագրություն. բնակարանային բյուրոների ծառայություններ (անշարժ գույք). ֆինանսական վերլուծություն. հնարժեք իրերի գնահատում. արվեստի ստեղծագործությունների գնահատում. վճարագրերի իսկության ստուգում. խորհրդատվություն ֆինանսական հարցերով. խորհրդատվություն ապահովագրության հարցերով. սպասարկում վարկային քարտերով. սպասարկում դեբետ քարտերով. դրամական միջոցների փոխանցում էլեկտրոնային հաշվարկների համակարգով. ֆինանսական տեղեկատվության տրամադրում. ապահովագրության հարցերով տեղեկատվության տրամադրում. թանկարժեք իրերի գնահատում. դրամագիտական իրերի գնահատում. վարձակալական վճարների գանձում. դրոշմանիշների գնահատում. արժեթղթերի թողարկում. արժեքավոր իրերի պահպանություն. բորսայական գնանշումներ. վարկային քարտերի թողարկում. գրասենյակների վարձույթ (անշարժ գույք). կենսաթոշակների վճարման ծառայություններ. ֆինանսական հովանավորություն. բանկային գործառնությունների առցանց իրականացում. առևտրաարդյունաբերական գործունեության լուծարք (ֆինանսական ծառայություններ). վերանորոգման արժեքի ֆինանսական գնահատում. ածխածնային վարկեր իրականացնելու միջնորդություն. անտառի ֆինանսական գնահատում. բրդի ֆինանսական գնահատում. վարկավորում գրավի դիմաց. պահեստային (ապահովագրական) ֆոնդերի ծառայություններ. միջնորդային ծառայություններ. խորհրդատվություն պարտքի հետ կապված հարցերով. շինարարական նախագծերի ֆինանսավորման կազմակերպում. ֆինանսական տեղեկատվության տրամադրում վեբ-կայքերի միջոցով. փոխհատուցման վճարների ֆինանսական կառավարում այլ անձանց համար. հիմնադրամների տեղաբաշխում. միջնորդական գործարքներ կապված արժեթղթերի և պարտատոմսերի հետ. ակումբային քարտեր օգտագործելու միջոցով զեղչերի տրամադրում երրորդ անձանց. պայմանական ազատվածների համար երաշխավորման ծառայություններ. տարբեր մասնագետների համատեղ աշխատանքի համար գրասենյակների վարձույթ. ֆինանսական գնահատում մրցույթների հայտերին արձագանքելու վերաբերյալ. նավթի, գազի և հանքարդյունաբերության ոլորտներին վերաբերող զարգացման ծախսերի ֆինանսական գնահատումներ. ֆինանսական հետազոտություններ. անշարժ գույքի ծառայություններ. կրիպտո-ակտիվների էլեկտրոնային փոխանցում. մտավոր սեփականության ակտիվների

ֆինանսական գնահատում. նախահաշվի կազմում ծախսերի գնահատման նպատակներով. քրաուդֆանդինգ. էլեկտրոնային դրամապանակներով վճարման ծառայություններ. կրիպտո-ակտիվների ֆինանսական փոխանակումներ. էլեկտրոնային միջոցների փոխանցում ծածկագրային (բլոկչեյն) տեխնոլոգիայի միջոցով. նվերների վկայականների տրամադրում. մոբայլ բանկինգի ծառայություններ. ֆինանսական գործերի կառավարում. հարկային ֆինանսական խորհրդատվություն.

դաս 37. կահույքի խնամք. լուսանկարչական ապարատների վերանորոգում. էլեկտրասարքերի տեղադրում և վերանորոգում. վերելակների տեղադրում և վերանորոգում. ասֆալտապատում. ավտոմեքենաների վերանորոգում և տեխնիկական սպասարկում. ինքնաթիռների վերանորոգում և տեխնիկական սպասարկում. շենքերի ներսի մաքրում. լվացքատների ծառայություններ. գոլորշու կաթսաների մաքրում և վերանորոգում. այրիչների վերանորոգում և տեխնիկական սպասարկում. բուլդոզերների վարձույթ. գրասենյակային սարքավորումների և տեխնիկայի տեղադրում, վերանորոգում և տեխնիկական սպասարկում. հրդեհային ազդասարքերի տեղադրում և վերանորոգում. հակաառևանգման համակարգերի տեղադրում և վերանորոգում. կահույքի պաստառների վերանորոգում. սենյակ-սեյֆերի տեխնիկական սպասարկում և վերանորոգում. շինարարական տեխնիկայի վարձույթ. նավաշինություն. հագուստի վերականգնում. ջեռուցման սարքավորումների տեղադրում և վերանորոգում. կոշիկի վերանորոգում. ծխնելույզների մաքրում. անկիզելի պահարանների վերանորոգում և տեխնիկական սպասարկում. օդորակման կայանքների տեղադրում և վերանորոգում. շինարարություն. ստորջրյա շինարարություն. շինարարական աշխատանքների (ստուգիչ-կառավարիչ) վերահսկողություն. հագուստի վերանորոգում. կաշվե իրերի մաքրում, վերանորոգում և խնամք. խոհանոցային սարքավորումների տեղադրում. շենքերի քանդում. հակակոռոզիական մշակում. ախտահանում. ցուցանակների ներկում և նորացում. պահեստների կառուցում և վերանորոգում. շինարարական կառուցվածքների հերմետիկացում. էքսկավատորների վարձույթ. պատուհանների լվացում. կինոպրոյեկտորների վերանորոգում և տեխնիկական սպասարկում. վառարանների տեղադրում և վերանորոգում. մորթե իրերի մաքրում, վերանորոգում և խնամք. տրանսպորտային միջոցների յուղում. հագուստի մաքրում. ժամացույցների վերանորոգում և խնամք. արդյունաբերական ձեռնարկությունների կառուցում. ոռոգման սարքավորումների տեղադրում և վերանորոգում. կառույցների մեկուսացում. տրանսպորտային միջոցների լվացում. սպիտակեղենի լվացք. լվացք. մեքենայական սարքավորումների տեղադրում, վերանորոգում և տեխնիկական սպասարկում. քարաշինարարական աշխատանքներ. կահույքի վերականգնում. ծովապատնեշների կառուցում. հագուստի արդուկում. խողովակաշարերի, նավթամուղների կառուցում և տեխնիկական սպասարկում. պատերի պաստառապատում. անձրևի հովանոցների վերանորոգում. արևի հովանոցների վերանորոգում. կահույքի պաստառապատում. ներքին և արտաքին ներկարարական աշխատանքներ. չեչաքարով կամ ավազով մշակում. ծեփագործական աշխատանքներ. ջրմուղ և գազա-փականագործական տեխնիկական աշխատանքներ. տրանսպորտային միջոցների փայլեցում. պոմպերի վերանորոգում. նավահանգիստների կառուցում. դողերի պահպանաշերտերի վերականգնում. սառնարանային սարքավորումների տեղադրում և վերանորոգում. սպիտակեղենի արդուկում. կրկնական անագապատում՝ կլայեկում. գամում. տրանսպորտային միջոցների հակակոռոզիական մշակում. տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման կայաններ (վառելիքով լցավորում և սպասարկում). հեռախոսների տեղադրում և վերանորոգում. տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկում. լաքապատում. տրանսպորտային միջոցների մաքրում. վնասված տրանսպորտային միջոցների վերանորոգում. մաքրող մեքենաների վարձույթ. վնասատուների ոչնչացում, բացառությամբ գյուղատնտեսական, ակվակուլտուրայի, այգեգործական և անտառային տնտեսության. շինարարական փայտամածների մոնտաժում. աղյուսի շարում. ձևավոր սպիտակեղենի մաքրում. չոր մաքրում. շինարարության հարցերով տեղեկատվության տրամադրում. վերանորոգմանը վերաբերող

տեղեկատվության տրամադրում. դանակների սրում. լեռնահանքային օգտակար հանածոների արդյունահանում. հանքերի շահագործում. ճանապարհների սալարկում. զմռնիտե թղթով մշակում. ստորջրյա վերանորոգման աշխատանքներ. շենքերի մաքրում (արտաքին մակերևույթների). դողաձածկանների ռետինացում (վուլկանացում) (վերանորոգում). հորատանցքերի հորատում. տոնավաճառային կրպակների և տաղավարների կառուցում. համակարգիչների տեղադրում, սպասարկում և վերանորոգում. էլեկտրական սարքավորումների աշխատանքում խանգարումների վերացում. ամբողջովին կամ մասնակի մաշված շարժիչների վերանորոգում. ամբողջովին կամ մասնակի մաշված մեքենաների վերականգնում. վերամբարձ կռունկների վարձույթ (շինարարական սարքավորում). փողոցները մաքրող մեքենաների վարձույթ. տանիքաձածկային աշխատանքներ. արհեստական ձյան ծածկույթ ստեղծելու ծառայություններ. փողոցների մաքրում. անվտանգության կողպեքների վերանորոգում. արվեստի ստեղծագործությունների վերականգնում. երաժշտական գործիքների վերականգնում. դռների և պատուհանների տեղադրում. լողավազանների խնամք. տոներային քարթրիջների լիցքավորման ծառայություններ. խորհրդատվություն շինարարության հարցերով. ատաղձագործական աշխատանքներ. նավթի և գազի խորը հորատանցքերի հորատում. ցամաքուրդային պոմպերի վարձույթ. լվացքի մեքենաների վարձույթ. էլեկտրահաղորդման գծերի վերանորոգում. տրանսպորտային միջոցների կուտակիչների լիցքավորում. անիվների հավասարակշռման ծառայություններ. երաժշտական գործիքների լարում. մալուխների անցկացում, տեղադրում. բժշկական գործիքների ախտահանում. հանքաշերտերի ջրաճեղքման ծառայություններ. վնասատուների դեմ պայքարի ծառայություններ, բացառությամբ գյուղատնտեսական, ակվակուլտուրայի, այգեգործական և անտառային տնտեսության. ամանեղեն լվանալու մեքենաների վարձույթ. ամանեղեն չորացնելու մեքենաների վարձույթ. շինհրապարակներում հաղորդակցուղիների տեղակայում. էլեկտրիկների ծառայություններ. ջրհեղեղից պաշտպանվելու սարքավորումների տեղադրում և վերանորոգում. ձնահեռացում. թանաքային քարթրիջների լիցքավորման ծառայություններ. էլեկտրական տրանսպորտային միջոցների լիցքավորում. կենցաղային ծառայություններ (մաքրման ծառայություններ). բջջային հեռախոսների կուտակիչների լիցքավորման ծառայություններ. ավտոմեքենաների թափքերի թյունինգ. տրանսպորտային միջոցների արտաքին, ներքին և մեխանիկական մասերի տեղադրում ըստ պատվերի (թյունինգ). ավերակների պեղումներ, բացառությամբ հնագիտականի. վերելակների սպասարկում հեռակառավարման համակարգերի միջոցով. արհեստական խոտածածկի տեղադրում. կանաչապատման ծառայություններ իներտ նյութերով. շարժական լիցքավորիչների վարձույթ. կահույքի տեղադրման հետ կապված տեղակայման ծառայություններ. ատաղձագործական ծառայություններ (փայտե իրերի վերանորոգում). երեսքաշի հոտազերծում. բժշկական գործիքների ճառագայթում. մարտկոցների լիցքավորիչների վարձույթ. երեսքաշի ախտահանում. վիրաբուժական գործիքների ախտահանում. տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում խորհրդատվություն՝ համակարգիչների տեղադրման, սպասարկման և վերանորոգման հետ կապված. բժշկական գործիքների մանրէազերծիչների վարձույթ.

դաս 38. ռադիոհեռարձակում. հաղորդագրությունների փոխանցում. հեռուստահեռարձակում. հեռագրերի հաղորդում. հեռագրակապ տրամադրելու ծառայություններ. հեռագրակապ. հեռախոսակապ տրամադրելու ծառայություններ. հեռախոսակապ. բաժանորդային հեռագրակապի (տելեքսի) ծառայություններ. լրատվական գործակալությունների ծառայություններ. մալուխային հեռուստահեռարձակում. ռադիոհեռախոսակապ. համակարգչային տերմինալներով իրագործվող կապ. համակարգչի միջոցով հաղորդագրությունների և պատկերների փոխանցում. էլեկտրոնային նամակների հաղորդում. ֆաքսիմիլային կապ. հեռահաղորդակցության ոլորտում տեղեկատվության տրամադրում. փեյջինգային ծառայություն (ռադիոյի, հեռախոսի կամ էլեկտրոնային կապի այլ միջոցների օգտագործմամբ). հաղորդագրությունների փոխանցման ապարատուրայի վարձույթ. օպտիկաթելքային կապ. ֆաքսիմիլային ապարատների վարձույթ. մոդեմների

վարձույթ. հեռահաղորդակցական կապի սարքավորման վարձույթ. հեռախոսային ապարատների վարձույթ. արբանյակային կապ. հաղորդագրությունների էլեկտրոնային տախտակ (հեռահաղորդակցական ծառայություններ). ինտերնետին հեռահաղորդակցական միացման ապահովում. հեռահաղորդակցական միացումների և երթուղավորման ծառայություններ. հեռակոնֆերանսներ. ինտերնետ մուտքի ապահովում. համացանցի հասանելիության ժամանակի վարձույթ. հեռուստախանութների ծառայություններ տրամադրող հեռահաղորդակցական կապուղիների ապահովում. համացանցում բանավեճային համաժողովների հասանելիության ապահովում. տվյալների հիմնապաշար մուտքի ապահովում. ձայնային փոստի ծառայություններ. շնորհավորական բացիկների առցանց փոխանցում. թվային ֆայլերի հաղորդում. անլար հեռարձակում. տեսակոնֆերանսների համար կապի ծառայությունների տրամադրում. առցանց համաժողովների ապահովում, տրամադրում. տվյալների հոսքի փոխանցում. ռադիոկապ. տեսահաղորդում ըստ պահանջի. փոդքասթի հաղորդում. սմարթֆոնների վարձույթ. գեոլոկացիայի ծառայություններ (հեռահաղորդակցական ծառայություններ).

դաս 39. ճանապարհորդների ուղեկցում. ջրամատակարարում. ավիափոխադրումներ. սանիտարական փոխադրումներ. տրանսպորտային միջոցների քարշակում վնասվածքի դեպքում. ավտոմեքենաների վարձույթ. ավտոմոբիլային փոխադրումներ. ավտոբուսային փոխադրումներ. զբոսանավերի ծառայություններ. ջրային տրանսպորտի վարձույթ. սառցահատային ծառայություն. փոխադրումներ բեռնատար ավտոտրանսպորտով. նավերը փրկելու ծառայություններ. փոխադրում լիխտերներով. փոխադրումներ սայլային տրանսպորտով. երկաթուղային փոխադրումներ. ձիերի վարձույթ փոխադրման նպատակներով. փաթեթավորված բեռների առաքում. բեռների տեղափոխում. ապրանքների կշռաբաշխում. ծովային բեռնափոխադրումների միջնորդություն. կրուիզների կազմակերպում. տրանսպորտային ծառայություններ տեսարժան վայրերի դիտման համար. բեռնաթափման աշխատանքներ. ապրանքների առաքում. ապրանքների պահպանություն. ջրաբաշխում. էլեկտրաէներգիայի բաշխում. ջրանցքների ջրարգելակների կառավարում. ավտոմոբիլների կայանատեղերի ծառայություններ, ավտոկայանատեղի ծառայություններ. ապրանքների պահպանություն պահեստներում. պահեստների վարձույթ. փոխադրում լաստանավերով. փոխադրումներ գետային տրանսպորտով. նավավարձ (ապրանքների փոխադրում նավերով). նավավարձակալում. ավտոտնակների վարձույթ. փոխադրում խողովակաշարով. ավտոտրանսպորտի համար կայանատեղի վարձույթ. սառնոցների վարձույթ. տրանսպորտային միջոցների վարձույթ. երկաթուղային գնացքակազմի (վագոնների) վարձույթ. վագոնների վարձույթ. կահույքի փոխադրում. տրանսպորտային ծառայություններ. փոխադրումներ ջրային տրանսպորտով. ճանապարհորդական շրջագայությունների համար փոխադրումների կազմակերպում. ուղևորային փոխադրումներ. նավատարի ծառայություններ. քարշակում. խորտակված նավերի վերհանում. ճամփորդությունների համար տեղերի ամրագրում. ունեցվածքի փրկության ծառայություններ. տաքսի ծառայություն. տրամվայով փոխադրումներ. բեռների առաքում. ծովային փոխադրումներ. զրահապատ տրանսպորտով փոխադրումներ. ճանապարհորդների փոխադրում. թափոնների փոխադրում և պահում. փոխադրում տեղից-տեղ տեղափոխվելիս. նավակների պահպանություն. միջնորդություն նավավարձակալման դեպքում. միջնորդություն փոխադրումների դեպքում. վարորդների ծառայություններ. սուրհանդակային ծառայություններ (նամակների կամ ապրանքների առաքում). ապրանքների պահեստավորման վերաբերյալ տեղեկատվության տրամադրում. փոխադրումների հարցերով տեղեկատվության տրամադրում. ջրասուզակի զանգերի վարձույթ. ջրասուզակի սուզազգեստների վարձույթ. ապրանքների պահպանման բեռնարկղերի վարձույթ. տրանսպորտային միջոցների համար փակ կայանատեղերի վարձույթ. փրկարարական գործողություններ (տրանսպորտ). տրանսպորտային միջոցների ամրագրում. ճանապարհորդությունների ամրագրում. ստորջրյա փրկարարական աշխատանքներ. ապրանքների փաթեթավորում. փոստային

առաքում. թերթերի առաքում. փոստով պատվիրված ապրանքների առաքում. էներգիայի բաշխում. մրցարշավի ավտոմոբիլների վարձույթ. անվասայլակների վարձույթ. նավահանգստային բեռնորդների աշխատանքներ. տվյալների կամ փաստաթղթերի պահպանում էլեկտրոնային սարքերի վրա. հրթիռների արձակում երրորդ անձանց համար. ծաղիկների առաքում. նամակագրության նախավճարում. երթևեկության վերաբերյալ տեղեկատվության տրամադրում. սառցախցիկների վարձույթ. շշալցման ծառայություններ. տրանսպորտի լոգիստիկա. թռչող սարքերի վարձույթ. փոխադրում բեռնանավերով. ավտոբուսների վարձույթ. թռչող սարքերի շարժիչների վարձույթ. թանկարժեք իրերի փոխադրում հսկողության ներքո. նավագնացական համակարգերի վարձույթ. ճանապարհորդության երթուղու վերաբերյալ տեղեկատվության տրամադրում. նվերների փաթեթավորում. տրակտորների վարձույթ. երկրորդային հումքի հավաքում (տրանսպորտ). գինու էլեկտրական պահարանների վարձույթ. բանկոմատների համալրում կանխիկ դրամով. քարշերինգի ծառայություններ. առևտրի ավտոմատների համալրում. ուղեբեռի պահեստավորման ծառայություններ. երրորդ անձանց համար ուղևորափոխադրումների կազմակերպում առցանց հավելվածների միջոցով. քաղաքացիական նշանակության անօդաչու թռչող սարքերի ղեկավարման ծառայություններ. ճանապարհորդական վիզաների և ճանապարհորդական փաստաթղթերի կազմում արտասահման մեկնող անձանց համար. մասնավոր ավտոմեքենայի համատեղ օգտագործման ծառայություններ. բանալիների ժամանակավոր պահում. լուսանկարչական անօդաչու թռչող սարքերի վարձույթ. կենցաղային և արդյունաբերական թափոնների և աղբի հավաքում. պահեստային պահարանների վարձույթ. տրանսպորտային փոխադրման նպատակով մարդկանց տեղորոշում և հետևում. իրավաբանական փաստաթղթերի փոխադրման ծառայություններ. ճոպանուղային փոխադրումներ. տրանսպորտային միջոցների համար մանկական անվտանգության նստատեղերի վարձույթ. հանդերձարանների ծառայություններ. հսկիչ անօդաչու թռչող սարքերի վարձույթ. անվտանգության անօդաչու թռչող սարքերի վարձույթ. բեռների տեղորոշում և հետևում տրանսպորտային փոխադրման նպատակով. կապված ածխածնի երկօքսիդի փոխադրում երրորդ անձանց համար. կապված ածխածնի երկօքսիդի պահպանում երրորդ անձանց համար. մեքենաների բաժանորդագրման (վարձակալման/գնման) ծառայություններ.

դաս 40. հղկանյութային մշակում. կինոժապավենների մշակում. օդի մաքրում. մագնիսացում. մանածագործական իրերի վերջնամշակում. թղթի վերջնամշակում. արծաթապատում. գործվածքների սպիտակեցում. փայտանյութի մշակում. գործվածքների եզրերի մշակում. զոդում. հագուստի կարում. կադմիումապատում. գործվածքների փայլարդում. բրուտագործական աշխատանքներ. կոշիկի ներկում. քրոմապատում. մետաղի դրվագում այլ մետաղներով. կաշվի ներկում. մորթիների մշակում. գործվածքների ձևում. նկարների տպագրում. լուսանկարչական ժապավենների հայտածում. ոսկեզօծում. ջրի մշակում. գալվանապատում. անագապատում. մորթիների ձևակերտում ըստ պատվերի. դարբնոցային աշխատանքներ. մորթիների մշակում հակացեցային միջոցներով. ֆրեզում. հյութի քամում պտուղներից. սննդամթերքի ապխտում. գալվանացում. փորագրում. գործվածքների մշակում ջրամերժություն հաղորդելու համար. գործվածքների մշակում հրակայունություն հաղորդելու համար. գործվածքների մշակում չճմրթելիություն հաղորդելու համար. բրդի մշակում. մակաշերտում (լամինացում). աղացում. մետաղների մշակում. մետաղների մխում. ալյուրի աղացում. նիկելապատում. հինում (ջուլհակություն). մորթու մշակում. ողորկում հղկանյութերով. կազմարարական աշխատանքներ. նյութերի ռանդում. թամբագործական աշխատանքներ. նյութերի սղոցում դերձակների ծառայություններ. դաբաղում. խրտվիլակների խծուծում. ներկման ծառայություններ. մանածագործական իրերի ներկում. գործվածքների, մանածագործական իրերի մշակում. մանածագործական իրերի մշակում հակացեցային միջոցներով. գործվածքների ներկում. թղթի մշակում. ապակեգործական աշխատանքներ. ասեղնագործում. կաշվի մշակում. ապակիների երանգավորում մակերևութային ծածկապատմամբ. սննդամթերքի և ըմպելիքների պահածո-

յացում. անտառանյութի հատում և մասնատում. աղբի և թափոնների կրկնական մշակում. գործվածքների նստեցում. մորթիների փայլեցում. մորթիների կոկում. մորթիների ներկում. օդի հոտազերծում. օդի թարմացում. նյութերի հավաքում երրորդ անձանց պատվերով. գեղարվեստական աշխատանքների շրջանակում. գալվանական ոսկեզօծում. լազերային փորագրում. նյութերի մշակման վերաբերյալ տեղեկատվության տրամադրում. օպտիկական ապակու հղկում. լուսանկարների տպագրում. լուսափորագրում. նավթի վերամշակում. գործվածքի մգդակում. զտարկում. անասունների սպանդ. մաքրամշակում. թափոնների մշակում(վերամշակում). հագուստի ձևափոխում. պղնձապատում. ռետինացում (նյութերի մշակում). ատամնատեխնիկների ծառայություններ. էներգիա արտադրելու ծառայություններ. էլեկտրական գեներատորների վարձույթ. աղբի և թափոնների ոչնչացում. աղբի և թափոնների այրում. գունաբաժանում. բանալիներ պատրաստելու ծառայություններ. վնասակար նյութերի ակտիվազերծում. վիմագրություն. մետաղների ձուլում. պոլիգրաֆիա. հյուսելու մեքենաների վարձույթ. օֆսեթ տպագրություն. լուսանկարչական հորինվածքի կազմում. մետաքսատպություն. թափոնների և վերամշակված նյութի տեսակավորում (վերամշակում). սննդամթերքի սառեցում. օդորակիչների վարձույթ. ջեռուցման լրացուցիչ սարքերի վարձույթ. մահուդալմում. սառնապահպանման ծառայություններ. ավազաշիթային մշակման ծառայություններ. շոգեկաթսաների վարձույթ. թափոնների վերամշակում. եռակցման աշխատանքներ. ավտոմեքենաների ապակիների երանգավորում. երրորդ անձանց համար 3D տպագրություն ըստ պատվերի. գարեջրի եփում երրորդ անձանց համար. հացի արտադրություն ըստ պատվերի. սննդամթերքի և խմիչքների պաստերիզացում. գինու արտադրություն երրորդ անձանց համար. խորհրդատվություն գինեգործության ոլորտում. նավակների արտադրություն ըստ պատվերի. թորման ծառայություններ. արդյունաբերական ռոբոտների վարձույթ արտադրության մեջ օգտագործելու համար. օդանավերի հավաքում ըստ պատվերի. ատաղձագործական ծառայություններ (փայտե իրերի արտադրություն ըստ պատվերի). պանրի վերամշակման ծառայություններ դրա մշակման, հասունացման և հնացման ընթացքում. բետոնի մանրացում. սննդի ճառագայթում. մարտկոցների վարձույթ.

դաս 41. ակադեմիաներ (ուսուցում). զվարճանքի (ատրակցիոնների) զբոսայգիների ծառայություններ. զվարճությունների ծառայություններ. կենդանիների վարժեցում. կինեմատոգրաֆիական սարքավորումների վարձույթ. համերգավարների ծառայություններ. կինոստուդիաների ծառայություններ. կրկեսային կատարումների ներկայացում. մրցույթների կազմակերպում (ուսումնական կամ զվարճալի). հեռակա ուսուցում. ֆիզիկական դաստիարակություն. դեկորացիաների վարձույթ շոուծրագրերի համար. ժամանցի օբյեկտների տրամադրում. զվարճալի ռադիոհաղորդումներ. տեքստային նյութերի հրապարակում, բացառությամբ գովազդային նյութերի. կրթադաստիարակչական ծառայություններ. ձայնագրությունների վարձակալություն. կինոֆիլմերի վարձույթ. ֆիլմերի արտադրություն, բացառությամբ գովազդային ֆիլմերի. մարմնամարզության ուսուցում. գրքերը դուրս տալու հնարավորությամբ գրադարանների ծառայություններ. գրքերի հրատարակում. ռադիո և հեռուստատեսային ընդունիչների վարձույթ. ռադիո և հեռուստատեսային ծրագրերի մոնտաժում. վարյետեների ներկայացումներ. երաժշտասրահների ներկայացումներ. նվագախմբերի ծառայություններ. թատերական ներկայացումներ. շոուների արտադրություն. հեռուստատեսային զվարճալի հաղորդումներ. թատերական դեկորացիաների վարձույթ. կենդանաբանական այգիների ծառայություններ. սպորտային սարքերի տրամադրում. նկարիչներին մոդելներ տրամադրող գործակալությունների ծառայություններ. շարժական գրադարանների ծառայություններ. խաղատների ծառայություններ (խաղեր). կոլոքվիումների կազմակերպում և անցկացում. կոնֆերանսների կազմակերպում և անցկացում. համագումարների կազմակերպում և անցկացում. դիսկոտեկների ծառայություններ. կրթության ոլորտին վերաբերող տեղեկատվության տրամադրում. քննությունների անցկացում. զվարճության ոլորտին վերաբերող տեղեկատվության տրամադրում. ցուցահանդեսների կազմակերպում մշակութային կամ կրթության

նպատակներով. մոլեխաղերի ոլորտում ծառայություններ. գոլֆի դաշտերի տրամադրում. առողջության ակումբների ծառայություններ (առողջարար և ֆիթնեսի մարզումներ). հանգստի ճամբարների ծառայություններ (զվարճություններ). թատերականացված ներկայացումներ. կինոթատրոնների ծառայությունների տրամադրում. մանկապարտեզ (դաստիարակություն). սպորտային մրցումների կազմակերպում. ժամանցային հանդիպումների ծրագրերի կազմում. գործնական հմտությունների ուսուցում (ցուցադրություն). թանգարանային սարքավորումների տրամադրում. ձայնագրությունների ստուդիաների ծառայություններ. հանգստի վերաբերյալ տեղեկատվության տրամադրում. ստորջրյա սուզման հանդերձանքի վարձույթ. սպորտային սաքավորումների վարձույթ, բացառությամբ տրանսպորտային միջոցների. մարզադաշտերի սարքավորումների վարձույթ. տեսամագնիտոֆոնների վարձույթ. տեսաֆիլմերի վարձույթ. սեմինարների կազմակերպում և անցկացում. սպորտային ճամբարների ծառայություններ. գիտաժողովների (սիմպոզիումների) կազմակերպում և անցկացում. սպորտային միջոցառումների ժամկետների պլանավորում. կրթության գիշերօթիկ դպրոցներ. վարպետաց դասերի կազմակերպում և անցկացում (ուսուցում). գեղեցկության մրցույթների կազմակերպում. ներկայացումների տոմսերի ամրագրում. կրկնօրինակում. կրոնական կրթություն. վիճակախաղերի կազմակերպում. պարահանդեսների կազմակերպում. ներկայացումների կազմակերպում (իմպրեսարիոների ծառայություններ). խաղադահլիճների ծառայություններ տրամադրում. ձայնային սարքավորումների վարձակալություն. լուսավորման սարքերի վարձույթ թատրոնների կամ հեռուստաստուդիաների համար. թենիսի կորտերի վարձույթ. տեսախցիկների վարձույթ. սցենարներ գրելու ծառայություններ, բացառությամբ գովազդայինի. տեսագրությունների մոնտաժում. գրքերի և պարբերականների առցանց հրապարակում. հրապարակումներ էլեկտրոնային սեղանադիր հրատարակչական համակարգերի օգնությամբ. ենթագրերի կատարում. համակարգչային ցանցերի կողմից առցանց տրամադրվող խաղային ծառայություններ. կարաոկե ծառայություններ. երաժշտության ստեղծագործում. գիշերային ակումբ-սրճարանների ծառայություններ (զվարճություններ). ոչ ներբեռնելի էլեկտրոնային առցանց հրապարակումների տրամադրում. լուսանկարչական ռեպորտաժներ. լուսանկարչություն. մասնագիտական կողմնորոշում (խորհուրդներ կրթության կամ ուսուցման հարցերով). նորությունների ծառայություններ. թարգմանիչների ծառայություններ. թարգմանություն ժեստերի լեզվից. տեսագրում. մանրալուսապատճենում. տոմսերի բաշխման ծառայություններ (զվարճանք, ժամանց). տեքստերի խմբագրում. համերգների կազմակերպում և անցկացում. գեղագիրների ծառայություններ. հրապարակումների մանրակերտում, բացառությամբ գովազդայինների. նորաձևության ցուցադրության կազմակերպում ժամանցի նպատակով. մարզիչների, դասուսույցների ծառայություններ (ուսուցում). սպորտային հրապարակների վարձույթ. դիսկ-ժոկեյների ծառայություններ. բանավոր թարգմանություններ. անհատական մարզիչների ծառայություններ. ֆիթնեսի պարապմունքների անցկացում. մասնագիտական վերապատրաստում. երաժշտական արտադրանքի թողարկում. խաղալիքների վարձույթ. խաղասարքերի վարձույթ. դպրոցների կողմից մատուցվող կրթական ծառայություններ. ոչ բեռնելի երաժշտության առցանց տրամադրում. ոչ բեռնելի տեսանյութերի առցանց տրամադրում. կրկնուսույցի ծառայություններ. կրթական ոչ վիրտուալ ֆորումների կազմակերպում և անցկացում. երգահանների ծառայություններ. հեռուստատեսային և կինոսցենարների գրում. զբոսավարի (գիդի) ծառայություններ. սիմուլյատորի միջոցով մատուցվող ուսուցում. չբեռնվող ֆիլմերի տրամադրում «տեսանյութ ըստ պահանջի» ծառայության միջոցով. չբեռնվող հեռուստատեսային ծրագրերի տրամադրում «տեսանյութ ըստ պահանջի» ծառայության միջոցով. սադո (ճապոնական թեյի ծիսակարգի ուսուցում ). այկիդոյի ուսուցում. արվեստի ստեղծագործությունների վարձույթ. սենյակային ակվարիումների վարձույթ. լեռնային զբոսաշրջության իրականացում զբոսավարի ուղեկցությամբ. զգեստավորված դիմակահանդեսների կազմակերպում զվարճությունների համար. արվեստի պատկերասրահների կողմից

ներկայացվող մշակութային, կրթական կամ ժամանցային ծառայություններ. կինովարձույթ. նոու-հաու փոխանցում (ուսուցում). հատուկ պահանջներով օգնականների կողմից տրամադրվող կրթական ծառայություններ. ձյուդոյի ուսուցում. անօդաչու թռչող սարքերի օդանավավարման որակավորման քննությունների անցկացման ծառայություններ. հնչյունային օպերատորների ծառայություններ միջոցառումների համար. տեսանյութերի խմբագրման ծառայություններ միջոցառումների համար. լուսատեխնիկների ծառայություններ միջոցառումների համար. կինոֆիլմերի ստեղծում, բացառությամբ գովազդայինների. օգտագործողների կարծիքների տրամադրում զվարճանքի կամ մշակութային նպատակներով. օգտագործողների վարկանիշների տրամադրում զվարճությունների կամ մշակութային նպատակներով. ուսուցման նմանակիչների վարձույթ. ֆիզիկական պատրաստվածության գնահատման ծառայություններ ուսուցման նպատակներով. դեմքի վրա նկարելու ծառայություններ. էլեկտրոնային սպորտային մրցումների կազմակերպում. ներկայացումների բեմադրում. էլեկտրոնային սպորտային ծառայություններ. խաղերի գրադարանի ծառայություններ. մեդիա գրադարանի ծառայություններ. անօդաչու թռչող սարքերով լուսանկարչական նկարահանման ծառայություններ. անօդաչու թռչող սարքերով տեսանկարահանման ծառայություններ. առևտրային բնույթի գիտելիքների և նոու-հաուի փոխանցում. վերապատրաստման և ուսումնական քննության տրամադրում՝ կրթական ատեստավորման նպատակով. հետազոտություններ կրթության ոլորտում. էլեկտրոնային գիրք ընթերցող սարքերի վարձույթ. ժամանցային միջոցառումների կազմակերպում և անցկացում. մարզական միջոցառումների կազմակերպում և անցկացում. երաժշտական կրթություն. ենթագրեր՝ տակագրեր դնելու ծառայություններ. փախուստի սենյակներ (փախուստի խաղեր) (զվարճանք). թանգարանային ցուցահանդեսների ներկայացում. փողքասթների արտադրություն. կինեմատոգրաֆիական պարագաների վարձույթ. ռադիո և հեռուստահաղորդումների պլանավորում. ոչ ներբեռնելի առցանց պատկերների տրամադրում. առցանց վիրտուալ զբոսածրջության տրամադրում զբոսավարի (գիդի) ուղեկցությամբ. կենդանի գործողություններով խաղերին մասնակցելու համար սարքերի տրամադրում (LARP).

դաս 42. քիմիական անալիզ. նավթային հանքավայրերի հետազոտություններ շահագործման նպատակով. ճարտարապետական ծառայություններ. հետազոտություններ մանրէաբանության բնագավառում. ծառայություններ քիմիայի բնագավառում. հետազոտություններ քիմիայի բնագավառում. խորհրդատվություն ճարտարապետության հարցերով. հատակագծերի մշակում շինարարության բնագավառում. տեխնոլոգիական հետազոտություններ. նավթահորերի հսկողություն. հետազոտություններ կոսմետոլոգիայի բնագավառում. ինտերիերի ձևավորում. արդյունաբերական դիզայն. դիզայներների ծառայություններ փաթեթավորման բնագավառում. նյութերի փորձարկումներ. տեխնիկական նախագծերի ուսումնասիրում. երկրաբանական հետազննություն. նավթի հանքավայրերի հետազննություն. ճարտարագիտություն. օդերևութաբանական տեղեկատվություն. հողաչափում. համակարգիչների վարձույթ. համակարգիչների համար ծրագրերի կազմում. նավթի հանքավայրերի հետախուզում. հետազոտություններ ֆիզիկայի բնագավառում. հետազոտություններ մեխանիկայի բնագավառում. մանածագործական արտադրանքի փորձարկումներ. երկրաբանական հետախուզում. հետազոտություններ երկրաբանության բնագավառում. արվեստի ստեղծագործությունների իսկության որոշում. չափաբերում (չափումներ). ծրագրային ապահովման մշակում. ծրագրային ապահովման արդիականացում. խորհրդատվություն համակարգչային տեխնիկայի մշակման և զարգացման ոլորտում. հագուստի մոդելավորում. գեղարվեստական դիզայն. որակի հսկողություն. ծրագրային ապահովման վարձույթ. նոր արտադրատեսակների հետազոտություն և մշակում երրորդ անձանց համար. գեղարվեստական ձևավորում (արդյունաբերական դիզայն). ստորջրյա հետազոտություններ. համակարգչային տվյալների վերականգնում. ծրագրային ապահովման սպասարկում. համակարգչային համակարգերի վերլուծություն. հետազոտություններ կենսաբանության բնագավառում. քաղաքների հատակագծերի կազ-

մում. երկրաբաշխական փորձաքննություն (ճարտարագիտություն). համակարգչային համակարգերի նախագծում. ավտոմոբիլային տրանսպորտի տեխնիկական վերահսկողություն. համակարգչային ծրագրերի բազմացում. տվյալների կամ փաստաթղթերի փոխադրում ֆիզիկական կրիչից էլեկտրոնային կրիչի վրա. վեբ-կայքերի ստեղծում և տեխնիկական սպասարկում երրորդ անձանց համար. համակարգչային վեբ-կայքերի տեղադրում. համակարգչային ծրագրային ապահովման տեղակայում. ամպերի ցրում. տվյալների և տեղեկատվական ծրագրերի կերպափոխում, բացառությամբ ֆիզիկական կերպափոխման. խորհրդատվություն ծրագրային ապահովման հարցերով. վեբ-սերվերների վարձույթ. տեղեկատվական համակարգերի պաշտպանություն վիրուսներից. խորհուրդներ էներգիայի խնայողության հարցերով. գիտական հետազոտություններ շրջակա միջավայրի պաշտպանության բնագավառում. ինտերնետի համար որոնման միջոցների տրամադրում. փաստաթղթերի թվայնացում (տեսածրում). ձեռագրի վերլուծություն (ձեռագրաբանություն). ջերմոցային գազերի արտանետումների կրճատման հետ կապված գիտական տեղեկատվության և խորհրդատվության տրամադրում. անտառի որակի գնահատում. բրդի որակի գնահատում. հեռակա հասանելիության միջոցով համակարգչային համակարգերի աշխատանքի մոնիտորինգ. ջրի անալիզ. գիտական լաբորատորիաների ծառայություններ. աուդիտ էներգետիկայի ոլորտում. վեբ-կայքերի դիզայնի ոլորտում խորհրդատվություն. ծրագրային ապահովում որպես (SaaS) ծառայություն. տեղեկատվական տեխնոլոգիաների (SS) ոլորտում աջակցության ծառայություններ (ծրագրային ապահովման անսարքությունների վերացում). գիտական հետազոտություններ. սերվերների հոսթինգ. կլինիկական փորձարկումներ. տվյալների պահեստային հեռապատճենման ծառայություններ. տվյալների էլեկտրոնային պահպանում. համակարգչային տեխնոլոգիաների և ծրագրավորման վերաբերյալ տեղեկատվության տրամադրում վեբ-կայքերի միջոցով. աշխարհագրական քարտեզներ կազմելու ծառայություններ. վիրտուալ համակարգչային համակարգերի տրամադրում «ամպային» հաշվարկների միջոցով. տեխնոլոգիական հարցերով խորհրդատվություն. համակարգչային տեխնոլոգիաների ոլորտում խորհրդատվություններ. հեռահաղորդակցական տեխնոլոգիաների ոլորտում խորհրդատվական ծառայություններ. եղանակի տեսության ծառայություններ. համակարգչային անվտանգության ոլորտում խորհրդատվություն. տեխնիկական փաստաթղթերի կազմում. ինտերիերի դիզայն. բջջային հեռախոսների ապակողպում. համակարգչային համակարգերի մոնիտորինգ անսարքությունները բացահայտելու համար. վեբ-կայքերի տեղեկատվական կատալոգների ստեղծում և մշակում երրորդ անձանց համար (ծառայություններ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում). խորհրդատվություն համացանցային անվտանգության հարցերով. խորհրդատվություն տվյալների անվտանգության հարցերով. տվյալների կոդավորման ծառայություններ. համակարգչային համակարգերի հսկողություն չարտոնված մուտքերը կամ տվյալների կոտրանքը հայտնաբերելու համար. անձնական տվյալների էլեկտրոնային հսկողություն համացանցի միջոցով տեղեկատվության գողությունը հայտնաբերելու համար. վարկային քարտերով գործարքների էլեկտրոնային հսկողություն համացանցի միջոցով խարդախությունները հայտնաբերելու համար. ծրագրային ապահովման մշակում ծրագրային ապահովման հրատարակման շրջանակներում. հարթակ որպես ծառայություն (PaaS). համակարգչային հարթակների կատարելագործում. այցեքարտերի ձևավորում. գիտական և տեխնոլոգիական հետազոտություններ բնական աղետների ոլորտում. նավթի, գազի և հանքարդյունաբերության ոլորտներում հետախուզական ծառայություններ. գիտական և տեխնոլոգիական հետազոտություն արտոնագրային քարտեզագրման ոլորտում. հետազոտություններ շինարարական աշխատանքների ոլորտում. հետազոտություններ հեռահաղորդակցական տեխնոլոգիաների ոլորտում. հետազոտություններ եռակցման ոլորտում. բժշկական հետազոտություններ. գովազդային նյութերի գրաֆիկական ձևավորում. հաշվիչների վարձույթ էլեկտրաէներգիայի սպառման հաշվառման համար. էլեկտրոնային առևտրի գործարքների ժամանակ օգտագործողի վավե-

րացման ծառայություններ. օգտագործողի վավերացման ծառայություններ՝ օգտագործելով մեկանգամյա մուտքի տեխնոլոգիան առցանց ծրագրային ապահովման հավելվածների համար. համակարգչային կոդի գրում. խորհրդատվություն հեռահաղորդակցության ցանցերի անվտանգության հարցերով. զգեստների ձևավորում ներկայացումների համար. ներկայացումների դեկորացիաների ձևավորում. նախատիպերի նախագծում. համակարգչային մոդելավորված մոդելների նախագծում. անօդաչու թռչող սարքով քարտեզագրական կամ ջերմագրական չափումներ կատարելու ծառայություններ. կրիպտոմայնինգ, կրիպտոակտիվների մայնինգ. պեղումների ոլորտում հետազոտություններ. համակարգչային գրաֆիկական դիզայն՝ տեսապրոյեկցիոն քարտեզագրման համար. թվային դատաբժշկական հետաքննություն կիբերհանցագործության ոլորտում. տեխնոլոգիական խորհրդատվական ծառայություններ թվային փոխակերպման համար. տվյալների կենտրոնի տարածքների վարձույթ. աշխարհագրական տեղեկատվության տրամադրում. չներբեռնվող աշխարհագրական քարտեզների առցանց տրամադրում. խորհրդատվություն արհեստական բանականության ոլորտում. հետազոտություն արհեստական բանականության տեխնոլոգիայի ոլորտում. օգտագործողների նույնականացման ծառայություններ՝ ծածկագրային (բլոկչեյն) տեխնոլոգիայի միջոցով. գեոտեխնիկական հետազոտություններ. երկրաբանական փորձնական հորատում. համակարգչային և տեսախաղերի մշակում. քվանտային հաշվարկ. բջիջների մշակում գիտահետազոտական նպատակներով. համակարգչային ծրագրավորման ծառայություններ տվյալների մշակման համար. տեխնիկական ծրագրային ապահովման ծառայություններ տվյալների մշակման համար. լոգոների ձևավորման ծառայություններ. գոլֆի դաշտի նախագծում. զուտ զրոյական արտանետումների վերաբերյալ գիտական տեղեկատվության և խորհրդատվության տրամադրում. գենետիկայի ոլորտում գիտական հետազոտություններ. վաճառքից առաջ նոր և օգտագործված տրանսպորտային միջոցների զննում. հնագիտական պեղումներ. ներմուծվող կամ արտահանվող ապրանքների տեստավորում և անալիզ կարանտինը անցնելու նպատակով. աստղադիտակների վարձույթ.

դաս 43. տեղերի ամրագրմամբ (հյուրանոցներում, պանսիոններում) զբաղվող գործակալություններ. սննդամթերքի պատրաստում և տրամադրում (քեյթրինգ). ծերանոցների ծառայություններ. սրճարանների ծառայություններ. սրճարան-նախաճաշարանների ծառայություններ. ճամբարային հարմարությունների տրամադրում. ճաշարանների ծառայություններ. ժամանակավոր կացարանի վարձույթ. պանսիոնների ծառայություններ. զբոսաշրջիկների համար տների ծառայություններ. հյուրանոցային կեցության ծառայություններ. մանկամսուրների ծառայություններ. ռեստորանների ծառայություններ. պանսիոնների ամրագրում. հյուրանոցների ամրագրում. ինքնասպասարկման ռեստորանների ծառայություններ. խորտկարանների ծառայություններ. պանսիոններ կենդանիների համար. բարերի ծառայություններ. հանգստի ճամբարների ծառայություններ (կացարանի տրամադրում). շարժական շինությունների վարձույթ. ժամանակավոր կացարանների ամրագրումներ. մոթելների ծառայություններ. կահույքի, սեղանի սպիտակեղենի և ամանեղենի վարձույթ. սենյակների, դահլիճների վարձույթ հավաքների համար. վրանների վարձույթ. խոհանոցային սարքերի վարձույթ. խմելու ջրի բաշխիչ սարքերի վարձույթ. լուսավորող սարքերի վարձույթ. մթերքից խոհարարական արձանիկների ստեղծում. ընդունելության ծառայություններ ժամանակավոր կացարաններում (ժամանման և մեկնման կառավարում). վաշոկու ռեստորանների ծառայություններ. արիշտա ուդոնի և արիշտա սոբայի ռեստորանների ծառայություններ. սննդի ձևավորում. տորթերի ձևավորում. տեղեկություն և խորհրդատվություն սննդի պատրաստման հարցերով. անձնական խոհարարի ծառայություններ. նարգիլեի բարերի ծառայություններ. ընդունելության ծառայություններ ժամանակավոր կացարաններում (բանալիների հանձնում). կենդանիների ապաստանների ծառայություններ. ժամանակավոր կացարանների տրամադրում անցումային շրջանի տներում՝ հանցավոր ծագում ունեցող կամ թմրամիջոցների չարաշահման հակում ունեցող մարդկանց համար. հանգստյան տների վարձույթ. խոհանոցային

լվացարանակոնքերի վարձույթ. շարժական հանդերձարանների վարձույթ. սննդի վերահսկիչների ծառայություններ (սննդի և խմիչքների մասին տեղեկատվության տրամադրում). սնունդը դուրս հանելու ռեստորանների ծառայություններ. կահույքի վարձույթ. գրասենյակային կահույքի վարձույթ. ռոբոտների վարձույթ ըմպելիքներ պատրաստելու համար.

